ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՍՄՍՀ-ԳՀԾՁԲ-21/3

ք. Սիսիան «12» մայիս 2021թ.

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքը, ի դեմս համայնքի ղեկավար Ա. Սարգսյանի, որը գործում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Զանգված ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Է. Մարտիրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ճանապարհների կապիտալ վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:[17]

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված երկու աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 13400000 (տասներեք միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:

---

[17] *Հանվում է պայմանագրից, եթե մատուցվելիք ծառայությունը չի վերաբերում շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի քաղաքաշինական փորձաքննության իրականացմանը:*

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[22]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը

---

[22] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է քսաներկու էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Սիսիանի համայնք	**<<Զանգված>> ՍՊԸ**
ք. Սիսիան, Սիսական 31	**ք. Երևան, Գյուլիքեխվյան փողոց շ.7, բն. 11**
ՀՀ Ֆին.նախ. գործ. վարչ.	**<<ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ>> ՓԲԸ**
Հ/Հ 900292101285	**ՀՀ220563331309000**
ՀՎՀՀ 09215978	**ՀՎՀՀ 00891484**

Համայնքի ղեկավար _____ **Ա. Սարգսյան**
(ստորագրություն)
Կ.Տ

Տնօրեն _____ **Է. Մարտիրոսյան**
(ստորագրություն)
Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	71241200/1	Ստորև	դրամ	6700000	1	ՀՀ, ք. Սիսիան, Նար-Դոս փողոց, Նար-Դոս - Գ Նժդեհ ճանապարհահատված, Խանջյան 1ա , 3ա, Հ. Ազոյան 2, 2ա, 4, 6, 8, 10 , Որոտան 2ա, Շիրվանզադե 2ա բազմաբնակարան շենքերի հարակից փողոցներ, Որոտան 1,3,5,7, Որոտան 2,4,6,8 բազմաբնակարան շենքերի հետնամասեր	Ստորև
2	71241200/2	Ստորև	դրամ	6700000	1	ՀՀ, ք. Սիսիան, Խանջյան փողոցի վերջնամաս, Ռաֆֆու փողոց, Ն. Ադոնց-ից Տեր-Ղազարյան ճանապարհահատված, Ն. Ադոնցի փակուղու, Ա. Մանուկյան փողոց , Գայի 3,4, Բռնակոթ բնակավայրի Վ. Ոսկանյան փողոցից դպրոց տանող ճանապարհահատված	Ստորև

Չափաբաժին 1 - Սիսիան համայնքի Նար-Դոս փողոցի, Նար-Դոս - Գ Նժդեհ ճանապարհահատվածի, Խանջյան 1ա , 3ա, Հ. Ազոյան 2, 2ա, 4, 6, 8, 10 , Որոտան 2ա, Շիրվանզադե 2ա բազմաբնակարան շենքերի հարակից փողոցների, Որոտան 1,3,5,7, Որոտան 2,4,6,8 բազմաբնակարան շենքերի հետնամասերի, փողոցների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման ծառայություններ

Ծրագրի անվանումը	Ճանապարահատվածի հիմնանորոգում
Ֆինանսավորման աղբյուր	Պետական և համայնքային բյուջե
Պատվիրատու	Սիսիանի համայնք
Ծառայության անվանումը	Սիսիան համայնքի Նար-Դոս փողոցի, Նար-Դոս - Գ Նժդեհ ճանապարհահատվածի, Խանջյան 1ա , 3ա, Հ. Ազոյան 2, 2ա, 4, 6, 8, 10, Որոտան 2ա, Շիրվանզադե 2ա բազմաբնակարան շենքերի հարակից փողոցների, Որոտան 1,3,5,7, Որոտան 2,4,6,8 բազմաբնակարան շենքերի հետնամասերի, փողոցների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման ծառայություններ

Օբյեկտի համառոտ նկարագիրը	**<u>Նար-Դոս փողոց</u>** Ճանապարհի կարգը - IV, Ճանապարհը բնութագրող նկարագիրը (գլխավոր, երկրորդային, նպատակային կիրառությունը) - երկրոդային, Երթևեկելի մասի լայնությունը - մոտ 8-10մ, Շարժման գոտիների քանակը - երկու, Մայթերի առկայությունը և լայնությունը - մոտ 1.5-2մ /երկկողմանի/, Կառուցման/վերանորգման ենթակա հատվածի երկարությունը - 430մ, Ճանապարհային պատվածքի և ծածկի տիպը - ասֆալտբետոն /քայքայված/ **<u>Նար-Դոս - ԳՇ Նժդեհ ճանապարհահատված</u>** Ճանապարհի կարգը - IV, Ճանապարհը բնութագրող նկարագիրը (գլխավոր, երկրորդային, նպատակային կիրառությունը) - երկրոդային, Երթևեկելի մասի լայնությունը - մոտ 3մ, Կառուցման/վերանորգման ենթակա հատվածի երկարությունը - 170մ, Ճանապարհային պատվածքի և ծածկի տիպը – Հողային ծածկույթ, **<u>Խանջյան 1ա, 3ա բազմաբնակարան բնակելի շենքերի հարակից փողոց</u>** Ճանապարհի կարգը - IV, Ճանապարհը բնութագրող նկարագիրը (գլխավոր, երկրորդային, նպատակային կիրառությունը) - երկրոդային, Երթևեկելի մասի լայնությունը - մոտ 7-8մ, Շարժման գոտիների քանակը - երկու, Մայթերի առկայությունը և լայնությունը - մոտ 1.2-1.5մ /երկկողմանի/, Կառուցման/վերանորգման ենթակա հատվածի երկարությունը - 210մ, Ճանապարհային պատվածքի և ծածկի տիպը – խճային **<u>Հ. Ազոյան 2, 2ա, 4, 6, 8, 10 բազմաբնակարան բնակելի շենքերի փողոցներ</u>** Ճանապարհի կարգը - IV, Ճանապարհը բնութագրող նկարագիրը (գլխավոր, երկրորդային, նպատակային կիրառությունը) - երկրոդային, Երթևեկելի մասի լայնությունը - մոտ 7-8մ, Շարժման գոտիների քանակը - երկու, Մայթերի առկայությունը և լայնությունը - մոտ 1.2-1.5մ /երկկողմանի/, Կառուցման/վերանորգման ենթակա հատվածի երկարությունը - 630մ, Ճանապարհային պատվածքի և ծածկի տիպը - ասֆալտբետոն /քայքայված/ **<u>Որոտան 2ա, Շիրվանզադե 2ա բազմաբնակարան շենքերի հարակից փողոցներ</u>** Ճանապարհի կարգը - IV, Ճանապարհը բնութագրող նկարագիրը (գլխավոր, երկրորդային, նպատակային կիրառությունը) - երկրոդային, Երթևեկելի մասի լայնությունը - մոտ 7-8մ, Շարժման գոտիների քանակը - երկու, Մայթերի առկայությունը և լայնությունը - մոտ 1.5 /միակողմանի/, Կառուցման/վերանորգման ենթակա հատվածի երկարությունը - 450մ, Ճանապարհային պատվածքի և ծածկի տիպը – Հողային ծածկույթ **<u>Որոտան 1, 3, 5, 7 բազմաբնակարան բնակելի շենքերի հետնամաս</u>** Ճանապարհի կարգը - IV, Ճանապարհը բնութագրող նկարագիրը (գլխավոր, երկրորդային, նպատակային կիրառությունը) - երկրոդային, Երթևեկելի մասի լայնությունը - մոտ 6-7մ, Շարժման գոտիների քանակը - երկու, Մայթերի առկայությունը և լայնությունը - մոտ 1.2-1.5մ /երկկողմանի/, Կառուցման/վերանորգման ենթակա հատվածի երկարությունը - 325մ, Ճանապարհային պատվածքի և ծածկի տիպը - ասֆալտբետոն /քայքայված/, **<u>Որոտան 2,4,6,8 բազմաբնակարան շենքերի հետնամասեր</u>** Ճանապարհի կարգը - IV, Ճանապարհը բնութագրող նկարագիրը (գլխավոր, երկրորդային, նպատակային կիրառությունը) - երկրոդային, Երթևեկելի մասի լայնությունը - մոտ 6-7մ, Շարժման գոտիների քանակը - երկու, Մայթերի առկայությունը և լայնությունը - մոտ 1.5մ /աջակող/, Կառուցման/վերանորգման ենթակա հատվածի երկարությունը - 290մ, Ճանապարհային պատվածքի և ծածկի տիպը – խճային, բետոնային ծածկույթ

Նախատեսվող աշխատանքները	**Նար-Դոս փողոց** Խճային հիմքի իրականացում H=15սմ մոտ 5590 քմ: Գոյություն ունեցող քայքայված, ջարդված եզրաքարերի ապամոնտաժում նորի տեղադրում մոտ 860 գծմ: Ջրահեռացման առվի իրականացում 430 գծմ: Երթևեկելի մասի հարթեցնող շերտի իրականացում ասֆալտբետոնից H=3սմ մոտ 4300 քմ: Երթևեկելի մասի ծածկի իրականացում խոշորահատիկ ասֆալտբետոնից H=5 սմ մոտ 4300քմ: Մայթերի ծածկի իրականացում մանրահատիկ ասֆալտ բետոնից 1290 քմ: **Նար-Դոս - ԳՇ Նժդեհ ճանապարհահատված** Խճային հիմքի իրականացում H=15սմ մոտ 510քմ: Նոր եզրաքարերի տեղադրում մոտ 340գծմ: Երթևեկելի մասի ծածկի իրականացում խոշորահատիկ ասֆալտբետոնից H=5 սմ մոտ 510քմ: **Խանջյան 1ա, 3ա բազմաբնակարան բնակելի շենքերի հարակից փողոց** Խճային հիմքի իրականացում H=15սմ մոտ 2000 քմ: Գոյություն ունեցող քայքայված, ջարդված եզրաքարերի ապամոնտաժում նորի տեղադրում մոտ 400 գծմ: Ջրահեռացման առվի իրականացում 210 գծմ ըստ անհրաժեշտության: Երթևեկելի մասի հարթեցնող շերտի իրականացում ասֆալտբետոնից H=3սմ մոտ 1680 քմ: Երթևեկելի մասի ծածկի իրականացում խոշորահատիկ ասֆալտբետոնից H=5 սմ մոտ 1680 քմ: Մայթերի ծածկի իրականացում մանրահատիկ ասֆալտ բետոնից 320 քմ: **Հ. Ազոյան 2, 2ա, 4, 6, 8, 10 բազմաբնակարան բնակելի շենքերի փողոցներ** Խճային հիմքի իրականացում H=15սմ մոտ 5990 քմ: Գոյություն ունեցող քայքայված, ջարդված եզրաքարերի ապամոնտաժում նորի տեղադրում մոտ 1100 գծմ: Երթևեկելի մասի հարթոցնող շերտի իրականացում ասֆալտբետոնից H=3սմ մոտ 5050 քմ: Երթևեկելի մասի ծածկի իրականացում խոշորահատիկ ասֆալտբետոնից H=5 սմ մոտ 5050քմ : Մայթերի ծածկի իրականացում մանրահատիկ ասֆալտ բետոնից 950 քմ: **Որոտան 2ա, Շիրվանզադե 2ա բազմաբնակարան շենքերի հարակից փողոցներ** Խճային հիմքի իրականացում H=15սմ մոտ 4275քմ: Նոր եզրաքարերի տեղադրում մոտ 900գծմ: Երթևեկելի մասի հարթեցնող շերտի իրականացում ասֆալտբետոնից H=3սմ մոտ 3600քմ: Երթևեկելի մասի ծածկի իրականացում խոշորահատիկ ասֆալտբետոնից H=5 սմ մոտ 3600քմ: Մայթերի ծածկի իրականացում մանրահատիկ ասֆալտ բետոնից 675 քմ: **Որոտան 1, 3, 5, 7 բազմաբնակարան բնակելի շենքերի հետնամաս** Խճային հիմքի իրականացում H=15սմ մոտ 3250 քմ: Գոյություն ունեցող քայքայված, ջարդված եզրաքարերի ապամոնտաժում նորի տեղադրում մոտ 650 գծմ: Ջրահեռացման առվի իրականացում մոտ 325 գծմ: Երթևեկելի մասի հարթեցնող շերտի իրականացում ասֆալտբետոնից H=3սմ մոտ 2270 քմ: Երթևեկելի մասի ծածկի իրականացում խոշորահատիկ ասֆալտբետոնից H=5 սմ մոտ 2270քմ: Մայթերի ծածկի իրականացում մանրահատիկ ասֆալտ բետոնից 980քմ: **Որոտան 2,4,6,8 բազմաբնակարան շենքերի հետնամասեր** Խճային հիմքի իրականացում H=15սմ մոտ 2465քմ: Նոր եզրաքարերի տեղադրում մոտ 580գծմ: Երթևեկելի մասի հարթեցնող շերտի իրականացում ասֆալտբետոնից H=3սմ մոտ 2030քմ: Երթևեկելի մասի ծածկի իրականացում խոշորահատիկ ասֆալտբետոնից H=5 սմ մոտ 2030քմ: Մայթերի ծածկի իրականացում մանրահատիկ ասֆալտ բետոնից 435 քմ:

Ճանապարհի/փողոցի անվանումը	Նար-Դոս փողոցի, Նար-Դոս - Գ Նժդեհ ճանապարհահատվածի, Խանջյան 1ա , 3ա, Հ. Ազոյան 2, 2ա, 4, 6, 8, 10 , Որոտան 2ա, Շիրվանզադե 2ա բազմաբնակարան շենքերի հարակից փողոցների, Որոտան 1,3,5,7, Որոտան 2,4,6,8 բազմաբնակարան շենքերի հետնամասեր
Ճանապարհի/փողոցի կարգը	IV-րդ
Երթևեկամասերի ծածկի տեսակը	ասֆալտբետոնյա
Ընդհանուր դրույթներ	• Յուրաքանչյուր ճանապարհահատվածի համար նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն և ներկայացվեն հայերեն և ռուսերեն լեզուներով՝ 5 թղթային օրինակով և մեկ էլեկտրոնային տարբերակով (ACAD PDF ֆորմատներով, ծավալաթերթերը, ամփոփագրերը և նախահաշիվները նաև Excel ֆորմատով): • Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառման միջոցով, լինեն գունավոր և ընթեռնելի: • Կատարողը ներկայացնում է նաև քաղաքաշինական պարզ փորձաքննության եզրակացություն, որը պետք է լինի դրական:
Հիմնական պարտականություններ և պահանջներ	***Հիմնական պարտականություններ՝*** • Շահառու համայնքից (կամ համայնքներից) նախագծման թույլտվություն (ներ) կամ ճարտարապետահատակագծային առաջադրանքի (ների) ստացում: • Ինժեներական հետազննման իրականացում: • Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում: • Ճանապարհի ծրագծի սահմաններում գտնվող ստորգետնյա և վերգետնյա ինժեներական բոլոր գծերի ուսումնասիրություն, անհրաժեշտ տեխնիկական պայմանների ձեռք բերում և ճանապարհի ծրագծի իրականացմանը խոչընդոտելու, իսկ ստորգտնյա գծերի դեպքում նաև ոչ բարվոք վիճակում գտնվելու դեպքում այդ գծերի համար տալ նախագծային լուծում: Ինժեներական գծերի (նաև սարքավորումների) տեղափոխման անհրաժեշտության դեպքում դրանց տեղափոխման նախագիծի մշակում և իրավասու կազմակերպությունների հետ համաձայնեցում: • Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ, հիմնանորոգվող տեղամասը հանձնման-ընդունման ակտի միջոցով կապալառու կազմակերպությանը հանձնում ՝ տեղանքին ամրակցող նշաններով և բարձրությունների հենանիշերով: Նախագծողները և փորձաքննություն իրականացնողները պետք է ունենան համապատասխան աշխատանքների իրականացման լիցենզիաներ: ***Հետազննման վերաբերյալ պահանջներ՝*** • Ինժեներական հետազննումն իրականացնել նախագծային փաստաթղթերը մշակելու և նախագծային լուծումները հիմնավորելու անհրաժեշտ ծավալով, • հետազննման ընթացքում հիմնանորոգվող ճանապարհի երկայնքով առնվազն **<u>յուրաքանչյուր 330 մետր տեղամասում, (իսկ նստվածքային տեղամասերում պարտադիր՝ առնվազն 2մ խորությամբ)</u>** կատարել հորատումներ՝ ճանապարհային պատվածքի շերտի հաստության, պատվածքի շերտերի նյութերի կազմվածքի, հիմնատակի գրունտների ուսումնասիրման անհրաժեշտ խորությամբ և վիճակի գնահատում:

- հետազննման ընթացքում իրականացնել հիմնանորոգվող տեղամասի առկա վիճակի տեսանկարահանում:

Նախագծերի նկատմամբ պահանջներ

- Նախագծային փաստաթղթերի կազմը, բովանդակությունը և նախագծային լուծումները պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին:
- Նախագծերի մեջ պետք է նախատեսել առնվազն հետևյալ աշխատանքները՝

✓ հողային պաստառի վերականգնում / վերակառուցում / կառուցում (ըստ անհրաժեշտության),

✓ հենապատերի վերականգնում / վերակառուցում / նորոգում / կառուցում (ըստ անհրաժեշտության),

✓ ճանապարհային պատվածքի վերականգնում / վերակառուցում (ըստ անհրաժեշտության),

✓ մայթերի վերականգնում / վերակառուցում / նորոգում / կառուցում (ըստ անհրաժեշտության),

✓ ջրահեռացման համակարգի վերականգնում / վերակառուցում / նորոգում / կառուցում (ըստ անհրաժեշտության),

✓ արհեստական կառուցվածքների վերականգնում / վերակառուցում / նորոգում / կառուցում (ըստ անհրաժեշտության),

✓ ճանապարհի կահավորում,

✓ անվտանգության տարրերի, ինչպես նաև սև կետերի շտկման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացում:

Նախագծերի կազմի նկատմամբ պահանջներ՝

- Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N128-Ն հրամանով սահմանված պահանջներին համապատասխան և պետք է ներառեն՝

✓ բացատրագիր (որն իր մեջ կներառի հիմնանորոգվող տեղամասի վիճակի, հետազննման արդյունքների՝ այդ թվում նաև գոյություն ունեցող ճանապարհային պատվածքի շերտի հաստության, գոյություն ունեցող ճանապարհային պատվածքի շերտերի նյութերի կազմվածքի, հիմնատակի գրունտների վիճակի հետազոտությունների և նախատեսվող աշխատանքների վերաբերյալ, անհրաժեշտ լաբորատոր փորձարկումների քանակը, տարածաշրջանի քարտեզ՝ նշելով այն հատվածը, որտեղ իրականացվելու են շինարարական աշխատանքներ, նախատեսվող աշխատանքների իրականացման համար պահանջվող մեքենա - մեխանիզմների և ինժեներատեխնիկական մասնագիտական խմբի կազմերը),

✓ ինժեներաերկրաբանական եզրակացություն (որն իր մեջ կներառի տեղեկատվություն՝ կլիմայի, ռելյեֆի, շրջանի սեյսմիկ և բնահողերի սեյսմիկ հատկությունների, բնահողերի տեսակները ըստ փխրեցման կարգի, ջրաբանությունը և ջրաերկրաբանությունը, տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ համաձայնեցված պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերի, օգտագործվող հանքանյութերի հանքերի տեղերի վերաբերյալ),

✓ գծագրեր (որոնք կներառեն՝ տախեոմետրական հանույթի հատակագիծը, այդ թվում՝ հենանիշերը իրենց կորդինատներով, ճանապարհի երկայնական կտրվածքը, լայնական կտրվածքներ՝ յուրաքանչյուրը 20մ հեռավորության վրա, սակայն հաշվի առնելով տեղանքի իրադրությունը նշված հեռավորությունը կարող է փոփոխվել, կահավորման և ջրահեռացման հատակագիծը, ճանապարհային պատվածքի կոնստրուկցիայի գծագրեր՝ բոլոր տիպերի համար կախված հարակից տարրերից),

✓ նախատեսվող արհեստական կառուցվածքների գծագրեր (որոնք կներառեն ծավալների մասնագրերը),

- ✓ տիպային գծագրեր (որոնք կներառեն՝ նախագծում ընդգրկվող կառուցվածքների, նախատեվող աշխատանքների և երթևեկության կազմակերպման սխեմաներ, այդ թվում՝ շինարարության ընթացքում աշխատանքային տեղամասերը լուսաազդանշանային առկայծող լապտերներով կահավորելու սխեման և այլն),
- ✓ ամփոփագրեր (որոնք կներառեն հողային աշխատանքների՝ ըստ գրունտների կարգի, դրանց մշակման, տեղափոխման մեխանիզմների և աշխատանքի տեսակի, երթևեկելի մասի նորոգման՝ ըստ ծածկի կոնստրուկտիվ առանձին շերտերի և աշխատանքի տեսակի, կամրջի կոնստրուկտիվ տարրերի նորոգման՝ ըստ աշխատանքի տեսակի, կահավորման և անվտանգության տարրերի՝ ըստ աշխատանքի տեսակի, արհեստական կառուցվածքների՝ ըստ աշխատանքի տեսակի ամփոփագրեր),
- ✓ համահավաք ամփոփագրեր,
- ✓ նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տուրքերը, վճարները և հարկերը՝ առանց նախատեսված վերադարձի գումարի, կնքված և ստորագրված նախագծողի կողմից (այդ թվում հաշվի առնել չնախատեսված աշխատանքների և ծախսերի 50%),
- ✓ նախահաշիվ (որն իր մեջ կներառի ամփոփ, օբյեկտային և տեղային նախահաշիվներ):

Համաձայնեցումներ՝

- նախագծային փաստաթղթերը համաձայնեցնել ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության հետ,
- համայնքների վարչական սահմաններում առաջարկվող նախագծային լուծումները համաձայնեցնել տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների հետ,
- տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների հետ համաձայնեցնել պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերը,
- կոմունիկացիաների (ջրագծի, գազատարի, կապի մալուխի և այլն) տեղափոխում նախատեսելու դեպքում նախագիծը համաձայնեցնել իրավասու շահագրգիռ մարմինների հետ:

Նորմատիվային պահանջներ

- Ինժեներական հետազննումն իրականացնել ՀՀՇՆ I-2.01-99 շինարարական նորմերով և ГОСТ 32836-2014-ի, ГОСТ 33179-2014-ի ստանդարտներով սահմանված պահանջների համաձայն:
- Ինժեներաերկրաբանական հետազննումն իրականացնել ГОСТ 32868-2014-ի ստանդարտով սահմանված պահանջների և ՀՀ-ում գործող այլ գերատեսչական նորմատիվ իրավական փաստաթղթերի համաձայն:
- Տեղագրագեոդեզիական հետազննումն իրականացնել ГОСТ 32869-2014-ի և ստանդարտով սահմանված պահանջների և ՀՀ-ում գործող այլ գերատեսչական նորմատիվ իրավական փաստաթղթերին համաձայն:
- Նախագծային փաստաթղթերը մշակել ՀՀՇՆ IV-11.05.02-99, ՇՆուԿ 2.05.03-84 «Կամուրջներ և խողովակներ» շինարարական նորմերերով, ՄՄ ՏԿ 014-2011 մաքսային միության տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջների համաձայն:
- ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 29-ի N 105-Ն հրամանով հաստատված մեթոդական ուղեցույցներով սահմանված պահանջների համաձայն:
- Ճանապարհի կահավորումն իրականացնել ՀՀ կառավարության 10.01.2008թ.-ի թիվ 113-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն:
- Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-

	Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն: • Նախագծային փաստաթղթերի աշխատանքային գծագրերը մշակել ГОСТ 21.701-2013, ГОСТ 21.101-97, ГОСТ 21.501-93 ստանդարտներով սահմանված կանոնների և ՀՀ-ում գործող գերատեսչական այլ նորմատիվային փաստաթղթերի համաձայն:

Ծառայության մատուցման ժամկետը	
սկիզբը	***ավարտը***
Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման մեկնարկի օրվանից:	Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման ծառայությունների մատուցման ավարտը՝ քսան օրացույցային օրից, հաշված պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման մեկնարկի օրվանից:

Չափաբաժին 2 - Սիսիան համայնքի Խանջյան փողոցի վերջնամասի, Ռաֆֆու փողոցի մի հատվածի, Ն. Ադոնց-ից Տեր-Ղազարյան ճանապարհահատված, Ն. Ադոնցի փակուղու, Ա. Մանուկյան փողոցի մայթերի և վաքերի , Գայի 3,4, Բռնակոթ բնակավայրի Վ. Ոսկանյան փողոցից դպրոց տանող ճանապարհահատվածի, փողոցների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման ծառայություններ	
Ծրագրի անվանումը	Ճանապարհահատվածի հիմնանորոգում
Ֆինանսավորման աղբյուր	Պետական և համայնքային բյուջե
Պատվիրատու	Սիսիանի համայնք
Ծառայության անվանումը	Սիսիան համայնքի Խանջյան փողոցի վերջնամասի, Ռաֆֆու փողոցի մի հատվածի, Ն. Ադոնց-ից Տեր-Ղազարյան ճանապարհահատված, Ն. Ադոնցի փակուղու, Ա. Մանուկյան փողոցի մայթերի և վաքերի , Գայի 3,4, Բռնակոթ բնակավայրի, Վ. Ոսկանյան փողոցից դպրոց տանող ճանապարհահատվածի, փողոցների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման ծառայություններ
Օբյեկտի համառոտ նկարագիրը	**<u>Խանջյան փողոցի վերջնամաս</u>** Ճանապարհի կարգը - IV, Ճանապարհը բնութագրող նկարագիրը (գլխավոր, երկրորդային, նպատակային կիրառությունը) - երկրորդային, Երթևեկելի մասի լայնությունը - մոտ 7-8մ, Շարժման գոտիների քանակը - երկու, Կառուցման/վերանորգման ենթակա հատվածի երկարությունը - 560մ, Ճանապարհային պատվածքի և ծածկի տիպը – խիճային ծածկույթ **<u>Ռաֆֆու փողոց</u>** Ճանապարհի կարգը - IV, Ճանապարհը բնութագրող նկարագիրը (գլխավոր, երկրորդային, նպատակային կիրառությունը) - երկրորդային, Երթևեկելի մասի լայնությունը - մոտ 8-9մ, Շարժման գոտիների քանակը - երկու, Մայթերի առկայությունը և լայնությունը - մոտ 1.5մ /երկկողմանի/, Կառուցման/վերանորգման ենթակա հատվածի երկարությունը - 200մ, Ճանապարհային պատվածքի և ծածկի տիպը – ասֆալտբետոն /քայքայված/ **<u>Ն. Ադոնց-ից Տեր-Ղազարյան ճանապարհահատված</u>** Ճանապարհի կարգը - IV, Ճանապարհը բնութագրող նկարագիրը (գլխավոր, երկրորդային, նպատակային կիրառությունը) - երկրորդային, Երթևեկելի մասի լայնությունը - մոտ 7-8մ, Շարժման գոտիների քանակը - երկու, Մայթերի առկայությունը և լայնությունը - 1.5մ /երկկողմանի/, Կառուցման/վերանորգման ենթակա հատվածի երկարությունը - 465մ, Ճանապարհային պատվածքի և ծածկի տիպը – խճային և ասֆալտբետոն /քայքայված/

	Ն. Ադոնցի փակուղի Ճանապարհի կարգը - IV, Ճանապարհը բնութագրող նկարագիրը (գլխավոր, երկրորդային, նպատակային կիրառությունը) - երկրոդային, Երթևեկելի մասի լայնությունը - մոտ 10-11մ, Շարժման գոտիների քանակը - երկու, Մայթերի առկայությունը և լայնությունը – մոտ 1.5մ /երկկողմանի մասնակի/, Կառուցման/վերանորգման ենթակա հատվածի երկարությունը - 500մ, Ճանապարհային պատվածքի և ծածկի տիպը - ասֆալտբետոն /քայքայված/ **Ա. Մանուկյան փողոցի մայթեր և վաքեր** Ճանապարհի կարգը - IV, Ճանապարհը բնութագրող նկարագիրը (գլխավոր, երկրորդային, նպատակային կիրառությունը) - երկրոդային, Երթևեկելի մասի լայնությունը - մոտ 7-8մ, Շարժման գոտիների քանակը - երկու, Մայթերի առկայությունը և լայնությունը - մոտ 1.5 /աջակողմյա/, Կառուցման/վերանորգման ենթակա հատվածի երկարությունը - 270մ, Ճանապարհային պատվածքի և ծածկի տիպը – ասֆալտապատ ծածկույթ **Գայի 3, Գայի 4 բազմաբնակարան բնակելի շենքերի փողոցներ** Ճանապարհի կարգը - IV, Ճանապարհը բնութագրող նկարագիրը (գլխավոր, երկրորդային, նպատակային կիրառությունը) - երկրոդային, Երթևեկելի մասի լայնությունը - մոտ 9-10մ, Շարժման գոտիների քանակը - երկու, Մայթերի առկայությունը և լայնությունը - մոտ 1.5մ /միակողմանի/, Կառուցման/վերանորգման ենթակա հատվածի երկարությունը - 370մ, Ճանապարհային պատվածքի և ծածկի տիպը – կիսաքանդ ասֆալտբետոն **Բռնակոթ բնակավայրի, Վ. Ոսկանյան փողոցից դպրոց տանող ճանապարհահատված** Ճանապարհի կարգը - IV, Ճանապարհը բնութագրող նկարագիրը (գլխավոր, երկրորդային, նպատակային կիրառությունը) - երկրոդային, Երթևեկելի մասի լայնությունը - մոտ 5-6մ, Շարժման գոտիների քանակը - երկու, Կառուցման/վերանորգման ենթակա հատվածի երկարությունը - 460մ, Ճանապարհային պատվածքի և ծածկի տիպը – Հողային ծածկույթ
Նախատեսվող աշխատանքները	**Խանջյան փողոցի վերջնամաս** Խճային հիմքի իրականացում H=15սմ մոտ 5320քմ: Նոր եզրաքարերի տեղադրում մոտ 560գծմ: Ջրահեռացման առվի իրականացում 560գծմ: Երթևեկելի մասի հարթեցնող շերտի իրականացում ասֆալտբետոնից H=3սմ մոտ 4480քմ: Երթևեկելի մասի ծածկի իրականացում խոշորահատիկ ասֆալտբետոնից H=5 սմ մոտ 4480քմ: Մայթերի ծածկի իրականացում մանրահատիկ ասֆալտ բետոնից 840 քմ: **Ռաֆֆու փողոց** Խճային հիմքի իրականացում H=15սմ մոտ 2200քմ: Նոր եզրաքարերի տեղադրում մոտ 400գծմ: Երթևեկելի մասի հարթեցնող շերտի իրականացում ասֆալտբետոնից H=3սմ մոտ 1600քմ: Երթևեկելի մասի ծածկի իրականացում խոշորահատիկ ասֆալտբետոնից H=5 սմ մոտ 1600քմ: Մայթերի ծածկի իրականացում մանրահատիկ ասֆալտ բետոնից 600 քմ: **Ն. Ադոնց-ից Տեր-Ղազարյան ճանապարհահատված** Խճային հիմքի իրականացում H=15սմ մոտ 5115քմ: Նոր եզրաքարերի տեղադրում մոտ 930 գծմ: Ջրահեռացման առվի իրականացում 465գծմ: Երթևեկելի մասի հարթեցնող շերտի իրականացում ասֆալտբետոնից H=3սմ մոտ 3720քմ: Երթևեկելի մասի ծածկի իրականացում խոշորահատիկ ասֆալտբետոնից H=5 սմ մոտ 3720քմ: Մայթերի ծածկի իրականացում մանրահատիկ ասֆալտ բետոնից 1395 քմ: **Ն. Ադոնցի փակուղի** Խճային հիմքի իրականացում H=15սմ մոտ 5810քմ: Նոր եզրաքարերի տեղադրում մոտ 270գծմ: Երթևեկելի մասի հարթեցնող շերտի իրականացում ասֆալտբետոնից H=3սմ մոտ 5500քմ: Երթևեկելի մասի ծածկի իրականացում խոշորահատիկ ասֆալտբետոնից H=5 սմ մոտ 5500քմ: Մայթերի ծածկի իրականացում մանրահատիկ ասֆալտ բետոնից 310քմ: **Ա. Մանուկյան փողոցի մայթեր և վաքեր**

	Խճային հիմքի իրականացում H=15սմ մոտ 810մ: Նոր եզրաքարերի տեղադրում մոտ 540գծմ: Ջրահեռացման առվի իրականացում 130գծմ: Մայթերի ծածկի իրականացում մանրահատիկ ասֆալտ բետոնից 810 քմ: **Գայի 3, Գայի 4 բազմաբնակարան բնակելի շենքերի փողոցներ** Խճային հիմքի իրականացում H=15սմ մոտ 4000քմ: Նոր եզրաքարերի տեղադրում մոտ 400գծմ: Երթևեկելի մասի հարթեցնող շերտի իրականացում ասֆալտբետոնից H=3սմ մոտ 3700քմ: Երթևեկելի մասի ծածկի իրականացում խոշորահատիկ ասֆալտբետոնից H=5 սմ մոտ 3700քմ: Մայթերի ծածկի իրականացում մանրահատիկ ասֆալտ բետոնից 300 քմ: **Բռնակոթ բնակավայրի, Վ. Ոսկանյան փողոցից դպրոց տանող ճանապարհահատված** Խճային հիմքի իրականացում H=15սմ մոտ 3280քմ: Ջրահեռացման առվի իրականացում 170գծմ: Երթևեկելի մասի հարթեցնող շերտի իրականացում ասֆալտբետոնից H=3սմ մոտ 2820քմ: Երթևեկելի մասի ծածկի իրականացում խոշորահատիկ ասֆալտբետոնից H=5 սմ մոտ 2820քմ: Մայթերի ծածկի իրականացում մանրահատիկ ասֆալտ բետոնից 460 քմ: Հենապատի կառուցում 5մ:

Ճանապարհի/փողոցի կարգը IV-րդ

Երթևեկամասերի ծածկի տեսակը ասֆալտբետոնյա

Ընդհանուր դրույթներ

- Յուրաքանչյուր ճանապարհահատվածի համար նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն և ներկայացվեն հայերեն և ռուսերեն լեզուներով՝ 5 թղթային օրինակով և մեկ էլեկտրոնային տարբերակով (ACAD PDF ֆորմատներով, ծավալաթերթերը, ամփոփագրերը և նախահաշիվները նաև Excel ֆորմատով):
- Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառման միջոցով, լինեն գունավոր և ընթեռնելի:
- Կատարողը ներկայացնում է նաև քաղաքաշինական պարզ փորձաքննության եզրակացություն, որը պետք է լինի դրական:

Հիմնական պարտականություններ և պահանջներ

Հիմնական պարտականություններ՝

- Շահառու համայնքից (կամ համայնքներից) նախագծման թույլտվություն (ներ) կամ ճարտարապետահատակագծային առաջադրանքի (ների) ստացում:
- Ինժեներական հետազննման իրականացում:
- Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում:
- Ճանապարհի ծրագծի սահմաններում գտնվող ստորգետնյա և վերգետնյա ինժեներական բոլոր գծերի ուսումնասիրություն, անհրաժեշտ տեխնիկական պայմանների ձեռք բերում և ճանապարհի ծրագծի իրականացմանը խոչընդոտելու, իսկ ստորգտնյա գծերի դեպքում նաև ոչ բարվոք վիճակում գտնվելու դեպքում այդ գծերի համար տալ նախագծային լուծում: Ինժեներական գծերի (նաև սարքավորումների) տեղափոխման անհրաժեշտության դեպքում դրանց տեղափոխման նախագիծի մշակում և իրավասու կազմակերպությունների հետ համաձայնեցում:
- Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ, հիմնանորոգվող տեղամասը հանձնման-ընդունման ակտի միջոցով կապալառու կազմակերպությանը հանձնում՝ տեղանքին ամրակցող նշաններով և բարձրությունների հենանիշերով:

Նախագծողները և փորձաքննություն իրականացնողները պետք է ունենան համապատասխան աշխատանքների իրականացման լիցենզիաներ:

Հետազննման վերաբերյալ պահանջներ՝

- Ինժեներական հետազննումն իրականացնել նախագծային փաստաթղթերը մշակելու և նախագծային լուծումները հիմնավորելու անհրաժեշտ ծավալով,
- հետազննման ընթացքում հիմնանորոգվող ճանապարհի երկայնքով առնվազն **<u>յուրաքանչյուր 330 մետր տեղամասում, (իսկ նստվածքային տեղամասերում պարտադիր՝ առնվազն 2մ խորությամբ)</u>** կատարել հորատումներ՝ ճանապարհային պատվածքի շերտի հաստության, պատվածքի շերտերի նյութերի կազմվածքի, հիմնատակի գրունտների ուսումնասիրման անհրաժեշտ խորությամբ և վիճակի գնահատում:
- հետազննման ընթացքում իրականացնել հիմնանորոգվող տեղամասի առկա վիճակի տեսանկարահանում:

Նախագծերի նկատմամբ պահանջներ

- Նախագծային փաստաթղթերի կազմը, բովանդակությունը և նախագծային լուծումները պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին:
- Նախագծերի մեջ պետք է նախատեսել առնվազն հետևյալ աշխատանքները՝

✓ հողային պաստառի վերականգնում / վերակառուցում / կառուցում (ըստ անհրաժեշտության),

✓ հենապատերի վերականգնում / վերակառուցում / նորոգում / կառուցում (ըստ անհրաժեշտության),

✓ ճանապարհային պատվածքի վերականգնում / վերակառուցում (ըստ անհրաժեշտության),

✓ մայթերի վերականգնում / վերակառուցում / նորոգում / կառուցում (ըստ անհրաժեշտության),

✓ ջրահեռացման համակարգի վերականգնում / վերակառուցում / նորոգում / կառուցում (ըստ անհրաժեշտության),

✓ արհեստական կառուցվածքների վերականգնում / վերակառուցում / նորոգում / կառուցում (ըստ անհրաժեշտության),

✓ ճանապարհի կահավորում,

✓ անվտանգության տարրերի, ինչպես նաև սև կետերի շտկման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացում:

Նախագծերի կազմի նկատմամբ պահանջներ՝

- Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N128-Ն հրամանով սահմանված պահանջներին համապատասխան և պետք է ներառեն՝

✓ բացատրագիր (որն իր մեջ կներառի հիմնանորոգվող տեղամասի վիճակի, հետազննման արդյունքների՝ այդ թվում նաև գոյություն ունեցող ճանապարհային պատվածքի շերտի հաստության, գոյություն ունեցող ճանապարհային պատվածքի շերտերի նյութերի կազմվածքի, հիմնատակի գրունտների վիճակի հետազոտությունների և նախատեսվող աշխատանքների վերաբերյալ, անհրաժեշտ լաբորատոր փորձարկումների քանակը, տարածաշրջանի քարտեզ՝ նշելով այն հատվածը, որտեղ իրականացվելու են շինարարական աշխատանքներ, նախատեսվող աշխատանքների իրականացման համար պահանջվող մեքենա - մեխանիզմների և ինժեներատեխնիկական մասնագիտական խմբի կազմերը),

✓ ինժեներաերկրաբանական եզրակացություն (որն իր մեջ կներառի տեղեկատվություն՝ կլիմայի, ռելյեֆի, շրջանի սեյսմիկ և բնահողերի սեյսմիկ հատկությունների, բնահողերի տեսակները ըստ փխրեցման կարգի, ջրաբանությունը և ջրաերկրաբանությունը, տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ համաձայնեցված պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերի, օգտագործվող հանքանյութերի հանքերի տեղերի վերաբերյալ),

- ✓ գծագրեր (որոնք կներառեն՝ տախեոմետրական հանույթի հատակագիծը, այդ թվում՝ հենանիշերը իրենց կորդինատներով, ճանապարհի երկայնական կտրվածքը, լայնական կտրվածքներ՝ յուրաքանչյուրը 20մ հեռավորության վրա, սակայն հաշվի առնելով տեղանքի իրադրությունը նշված հեռավորությունը կարող է փոփոխվել, կահավորման և ջրահեռացման հատակագիծը, ճանապարհային պատվածքի կոնստրուկցիայի գծագրեր՝ բոլոր տիպերի համար կախված հարակից տարրերից),
- ✓ նախատեսվող արհեստական կառուցվածքների գծագրեր (որոնք կներառեն ծավալների մասնագրերը),
- ✓ տիպային գծագրեր (որոնք կներառեն՝ նախագծում ընդգրկվող կառուցվածքների, նախատեվող աշխատանքների և երթևեկության կազմակերպման սխեմաներ, այդ թվում՝ շինարարության ընթացքում աշխատանքային տեղամասերը լուսաազդանշանային առկայծող լապտերներով կահավորելու սխեման և այլն),
- ✓ ամփոփագրեր (որոնք կներառեն հողային աշխատանքների՝ ըստ գրունտների կարգի, դրանց մշակման, տեղափոխման մեխանիզմների և աշխատանքի տեսակի, երթևեկելի մասի նորոգման՝ ըստ ծածկի կոնստրուկտիվ առանձին շերտերի և աշխատանքի տեսակի, կամրջի կոնստրուկտիվ տարրերի նորոգման՝ ըստ աշխատանքի տեսակի, կահավորման և անվտանգության տարրերի՝ ըստ աշխատանքի տեսակի, արհեստական կառուցվածքների՝ ըստ աշխատանքի տեսակի ամփոփագրեր),
- ✓ համահավաք ամփոփագրեր,
- ✓ նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տուրքերը, վճարները և հարկերը՝ առանց նախատեսված վերադարձի գումարի, կնքված և ստորագրված նախագծողի կողմից (այդ թվում հաշվի առնել չնախատեսված աշխատանքների և ծախսերի 50%),
- ✓ նախահաշիվ (որն իր մեջ կներառի ամփոփ, օբյեկտային և տեղային նախահաշիվներ):

Համաձայնեցումներ՝

- նախագծային փաստաթղթերը համաձայնեցնել ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության հետ,
- համայնքների վարչական սահմաններում առաջարկվող նախագծային լուծումները համաձայնեցնել տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների հետ,
- տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների հետ համաձայնեցնել պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերը,
- կոմունիկացիաների (ջրագծի, գազատարի, կապի մալուխի և այլն) տեղափոխում նախատեսելու դեպքում նախագիծը համաձայնեցնել իրավասու շահագրգիռ մարմինների հետ:

Նորմատիվային պահանջներ

- Ինժեներական հետազննումն իրականացնել ՀՀՇՆ I-2.01-99 շինարարական նորմերով և ГОСТ 32836-2014-ի, ГОСТ 33179-2014-ի ստանդարտներով սահմանված պահանջների համաձայն:
- Ինժեներաերկրաբանական հետազննումն իրականացնել ГОСТ 32868-2014-ի ստանդարտով սահմանված պահանջների և ՀՀ-ում գործող այլ գերատեսչական նորմատիվ իրավական փաստաթղթերի համաձայն:
- Տեղագրագեոդեզիական հետազննումն իրականացնել ГОСТ 32869-2014-ի և ստանդարտով սահմանված պահանջների և ՀՀ-ում գործող այլ գերատեսչական նորմատիվ իրավական փաստաթղթերին համաձայն:

• Նախագծային փաստաթղթերը մշակել ՀՀՇՆ IV-11.05.02-99, ՇՆուԿ 2.05.03-84 «Կամուրջներ և խողովակներ» շինարարական նորմերերով, ՄՄ ՏԿ 014-2011 մաքսային միության տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջների համաձայն: • ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 29-ի N 105-Ն հրամանով հաստատված մեթոդական ուղեցույցներով սահմանված պահանջների համաձայն: • Ճանապարհի կահավորումն իրականացնել ՀՀ կառավարության 10.01.2008թ.-ի թիվ 113-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն: • Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն: • Նախագծային փաստաթղթերի աշխատանքային գծագրերը մշակել ГОСТ 21.701-2013, ГОСТ 21.101-97, ГОСТ 21.501-93 ստանդարտներով սահմանված կանոնների և ՀՀ-ում գործող գերատեսչական այլ նորմատիվային փաստաթղթերի համաձայն:	
Ծառայության մատուցման ժամկետը	
սկիզբը	***ավարտը***
Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման մեկնարկի օրվանից:	Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման ծառայությունների մատուցման ավարտը՝ քսան օրացույցային օրից, հաշված պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման մեկնարկի օրվանից:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Սիսիանի համայնք
ք. Սիսիան, Սիսական 31
ՀՀ Ֆին.նախ. գործ. վարչ.
Հ/Հ 900292101285
ՀՎՀՀ 09215978

Համայնքի ղեկավար _____ **Ա. Սարգսյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
<<Զանգված>> ՍՊԸ
ք. Երևան, Գյուլիքեխվյան փողոց շ.7, բն. 11
<<ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ>> ՓԲԸ
ՀՀ220563331309000
ՀՎՀՀ 00891484

Տնօրեն _____ **Է. Մարտիրոսյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«12» մայիս 2021թ. կնքված
ՍՄՍՀ-ԳՀՇՁԲ-21/3 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/1	*Սիսիան համայնքի Նար-Դոս փողոցի, Նար-Դոս - ԳՇ Նժդեհ ճանապարհահատվածի, Խանջյան 1ա , 3ա, Հ. Ազոյան 2, 2ա, 4, 6, 8, 10 , Որոտան 2ա, Շիրվանզադե 2ա բազմաբնակարան շենքերի հարակից փողոցների, Որոտան 1,3,5,7, Որոտան 2,4,6,8 բազմաբնակարան շենքերի հետնամասերի, փողոցների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության ապրամադրման ծառայություններ*	-	-	-	-	6700000	6700000	6700000	6700000	6700000	6700000	6700000	6700000	6700000
2	71241200/2	*Սիսիան համայնքի Խանջյան փողոցի վերջնամասի, Ռաֆֆու փողոցի մի հատվածի, Ն. Ադոնց-ից Տեր-Ղազարյան ճանապարհահատված, Ն. Ադոնցի փակուղու, Ա. Մանուկյան փողոցի մայթերի և վաքերի , Գայի 3,4, Բռնակոթ բնակավայրի, Վ. Ոսկանյան փողոցից դպրոց տանող ճանապարհահատվածի, փողոցների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության ապրամադրման ծառայություններ*	-	-	-	-	6700000	6700000	6700000	6700000	6700000	6700000	6700000	6700000	6700000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Սիսիանի համայնք
ք. Սիսիան, Սիսական 31
ՀՀ Ֆին.նախ. գործ. վարչ.
Հ/Հ 900292101285
ՀՎՀՀ 09215978

Համայնքի ղեկավար_____ Ա. Սարգսյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
<<Զանգված>> ՍՊԸ
ք. Երևան, Գյուլիքեխվյան փողոց շ.7, բն. 11
<<ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ>> ՓԲԸ
ՀՀ220563331309000
ՀՎՀՀ 00891484

Տնօրեն_____ Է. Մարտիրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ